վաստակ գործ դնեն բարոյապէս և նիւթապէս ազգային եկեղեցին ամուր հիմանց վրայ պահպանելու համար, որոց վրայ և դրուած է ի սկզբանէ Քրիստոսի ճարտարապետութեամբն։

Աղերսենք և կը հայցենք հանապազօրեայ ջեր մ աղօթքով, որ Աստուած առատացուցանէ հայութեան համար հայասէր և մարդասէր զաւակաց թիւը, որոնք ազգային գեղեցիկ եռանդով վառուած՝ հոգւով և սրտով պաշտպան հանդիսանան մեր եկեղեցւոյ պատւոյն և փառացն, ինչպէս և միշտ յամենայն դարս և տարիս պաշտպանել են՝ չխնայելով իրենց տաղանդն ու աշխատանքն։

Կը բարեմաղթեմք առ ամենակարողն Աստուած, որ իւր իմաստութեան առատ յոյսը պարգեւէ ձեզ ամենեցուն, խորհել, խօսել և գործել խոհական իմաստութեամբ և հեռատես զգուշութեամբ յօգուտ սիրելի ազգիս մերոյ և պաշտեցեալ եկեղեցւոյս, հեռու պահելով միանգամայն յազգակործան անմիաբանութենէ և յերկպառակութենէ։

Քանի այլ եւս ազգային կարեւոր խորհրդոց վրայ՝ երբ յաջողութեամբ Տեառն կարենանք գալ Բազու քաղաքդ յայցելութիւն ազգի եկեղեցւոյ պատուարեր զաւակացդ, կ'խօսենք բանիւ և կը հոգանք խորհրդակցութեամբ միմեանց։

Ողջ լերուք Տէրամբ և միշտ օրհնեալք

Մնամ խոնարհ աղօթարար վասն ձեր ամենեցուն

Առաջնորդ Հայոց թեմին Շամախւոյ

ՄԵՍՐՈՎԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ

Հմ. 1

1888 յունվար 3. ի քաղաքն Շամախի

Քարոզչի խնդրի մասին դրածս երկար գրութեան բաւարար պատասխան տալը յանձնուեց պ. Գրիգոր Թումայեանցին, որ խոստացել էր տարեկան 600 ռուբլի քարոզչին վարձ, երբ իւր ուզած մարդը լինի քարոզիչը, որը դեռ որոնում ենք ես և նա գտնելու։

Բազուեցւոց չէ յաջողում լաւ քարոզիչ ունենալ՝ ըստ նոցա ասութեան.